№ 78 Մայիսի 13 (25) 1880 Մայիսի 13 (25) № 78

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Մայի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքային ինքնավարութիւն։—Ներքին տեսութիւն։ Նամակ Փոթիից։ Նամակ Ղարսից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Սովը Հայաստանի մէջ։ Աւբանական խնդիրը։ Նամակ Գերմանիայից։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Տիսուր իրականութիւն։

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Դեռ հինգ թէ վեց տարի սրանից առաջ «Մշակը» խօսելով մեր քաղաքային վարչութեան գործունէութեան վրա և այն փասի վրա որ հասցնում են մեր վաճառականին զանազան հարստահարողներ և չարչիներ, առաջարկում էր մի ազատ գումար գործ դնել, այն է համքարների գումարը ձկների կապալառութենից գոյացած, Թիֆլիսում մեթերանոցներ հիմնելու համար։ Այդ մեթերանոցների մէջ պէտք է բերվէին ամեն տեսակ գիւղական արդիւնքներ և գիւղական հասարակութիւններին յորդորելով արդիւնաբերող ընկերութիւններ կազմելու, մեր քաղաքային վարչութիւնը միջոց կը տար գիւղերին անմիջական յարաբերութիւններ ունենալ քաղաքի հետ։ Այդպիսով արդեւք կը դրվեր զանազան չարչիներին թանգացնելու բնական արդիւնքները ի փասս քաղաքիս բնակիչների և յօգուտ իրանց սեփական գրպանների։

Տարիներ անցան։ Մեր մտքի վրա ուշադրութիւն չը դարձրին։ Քաղաքային վարչութիւնը ոչ թէ միայն անհոգ մնաց, բայց այժմ ամբողջ քաղաքը լսում է որ ինքնավարութեան ղեկավարները ոչ թէ միայն ոչինչ միջոցներ չեն գործ դնում չարչիների դէմ, բայց նոյն իսկ ինքնավարութեան ղեկավարներից ոմանք իրանք էլ պարապում են զանազան աֆերներով։

Ուրեմն նրանք, որոնք հասարակութենից ահագին ռօճիկներ են ստանում, որպէս զի պաշտպանեն հասարակութեան շահերը, նրանք իրանք ընդդէմ են գործում հասարակութեան շահերին։

Մի ժամանակ, երբ քաղաքային գործերը քաղաքացիների ձեռքումն էին, քաղաքային ղեկավարների կողմից զանազան շահաւէտ աֆէրներ անելը բնական էին գտնում ամենքը։ Ո՞վ չէ յիշում քաղաքագլխի մասին, որի փեսան ինտենդանտութեան մէջ էր ծառայում և երկուսն էլ պօդրիադներ և կապալներ էին առնում ու հարստանում։ Երբ առաջինը քաղաքագլխութիւնից դուրս եկաւ, իսկ միւսը ինտենդանտութեան ծառայութիւնից, երկուսի ձեռքումն էլ երևեցան ահագին տներ, որոնք կարծես երկրից բուսան...

Այդ ամենը բնական էին համարում, որովհետև նրանք հասարակ քաղաքացիներ էին, ինտելիգենցիային չէին պատկանում, համալսարանականներ չէին։

Բայց նոյնը չէր կարելի ասել համալսարանականներից, բարձր ուսում ստացածներից, ինտելիգենցիային պատկանող պարոններից, որոնց ձեռքումն է այժմ մեր ինքնավարութեան ղեկը։

Այդ պատճառով, մեր կարծիքով քաղաքային Դուման պէտք է ամենամեծ խստութեամբ վերաբերվի դէպի նրանց արածները, վերաքննի նրանց դէմ ուղղված այն մեղադրանքը, որ ամբողջ քաղաքը միաբերան կրկնում է։

Գ. Ա.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԽՈՒՐ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ամեն ազգի կեանքի մէջ եղել են ճգնաժամեր, երբ օրհասական ճակատագիրը դնելով նորա բոլոր գոյութեան հարցը մի կորստից անդունդի ափում, յարուցել է այդ ազգի մէջ այնպիսի բարոյական ոյժ և գերբնական հոգի, որ ազգի բիւրաւոր անդամներին էլ չէ բաժանել ոչինչ սովորական նախապաշարմունք՝ ոչ դրութեան և կոչման զանազանութիւնը, ոչ հասակի առաւելութիւնը և ոչ նաև սեռի տարբերութիւնը. ամենքը հաւասարված, ինչպէս Տիրոջ դատաստանի առաջ, միացել են մի վսեմ զգացմունքի կապով, որ տվում է հայրենեաց սէր։

Հայրենեաց սէրը այնչափ յափշտակել է մարդկանց միտքը և տիրապետել սիրտը, որ նոքա էլ մոռացել են թէ ո՞վ է նոցա առաջնորդը որ տանում է թշնամեաց մեծամեծ բանակների դէմ՝ մի կոյս թէ մի սպարապետ, մի մսավաճառ թէ մի ազգապետ, մի հասարակ երէց թէ մի եպիսկոպոս, մի պատանի թէ մի փորձառու զօրավար, մի վերջին գռեհիկ թէ մի արքայազն իշխան։ Հայրենեաց սիրոյ ազդեցութեան տակ էլ մարդիկ այդ չեն որոշել, այլ հաւասար եռանդով հետևել են Յովհաննէ դ'Արկին և Բօնապարտին, Մինչինին և իշխան Պօժարսկիին, Կանարիսին և Խիսօլանտիին, մի տեղ մսավաճառ Կարա-Գէորգիին, միւս տեղ զօրավար Գարիբալդիին և այնպիսի առաջնորդների հրաւէրներին, որոնց չնորհիւ այսօր մեծացել են չատ նոր ազգեր և անկախութիւն ստացել՝ սերբիացիք, զարադաղցիք, յոյները, բուլգարները և նաև բոլգարները։ Մի ազգի մէջ յայտնված այդպիսի պատմական երևոյթը ամենաճարտարկերպով աւետել է այդ ազգին թէ նորա ապագան չէ կարող չքանալ ոչինչ հարուածից՝ ոչ բռնութեան դարևոր չղթայից, ոչ արեան գետերից, ոչ հրից, ոչ ջրից...

Ահա այսօր հայոց ազգի մեծամասնութիւնը կանգնած է մի սոսկալի անդունդի գլխին. այդ անդունդը սովն է, որ սպառնում է խորտակել տաճկաց Հայաստանը. ինչ ենք տեսնում մենք այն ազգի մէջ, որը այնչափ վստահ յոյսեր է կապում իր ապագայի վրա։ Մենք տեսնում ենք հետևեալը։ Մի կին, մի օրիորդ այնչափ ազնիւ է գտնվում, որ էլ չը կարողանալով իրան զսպել, ձեռքը մի կաւոր թուղթ առած սկսում է դուռ դուռ ընկնել և երեք միլիոն եղբայրների կորստի անունով ողորմութիւն հաւաքել. իսկոյն դուրս է գալիս մի մեծափոր ուրեմն և պատկառելի Եպիսկոպոս, որը հարցնում է արհամարհանքով իր աթոռի բարձրութիւնից. «ո՞վ է դա, ո՞վ է դորան իրաւունք տուել...»

Մի երիտասարդ, մի օրական աշխատանքով ապրող թշուառ մարդ վեր է առնում թաթախը և նոյն ազնիւ նպատակով սկսում է փողոցէ փողոց թափառել, սրա, նորա առաջ կանգնել, վիզ ծռել, աղաչել, խոնարհիլ, իսկոյն գտնվում են մարդասէր աղաներ, որոնք հաւանում են նորան նորա արած յանդուգն վարմունքի համար, և օրական հացից զրկում։ Այսօր մի լրագիր աւելի արիւն է գտնվում, աւելի սրատես յայտնվում և մինչև ուրիշների խօսելը, սկսում է ինքը խօսել և զգուշացնել ազգին սպառնող այս ինչ, այն ինչ աղէտների դէմ, իսկոյն դուրս են գալիս միւսները, որոնք քարոզում են բարձրաձայն, ասելով. «մի հաւատաք դորան, դորա ասածը բոլորն էլ յիմարութիւն է...» Այսօր մէկը տեսնելով իր չորս կողմը ոսկի և չռայլութիւն, իսկ մէկ թշուառ և իր սրտի մտիկ երկրում՝ մահի տեսակներից ամենավատը, ամենասարսափելին և զանազան ծանր հանգամանքներից ճնշված ինքը ոչինչ չէ կարողանում ձեռնարկել, վասն որոյ դիմում է իր ընդունակ բարեկամին, խնդրելով որ նա առաջ ընկնի և բարի օրինակ տայ անտարբերներին, բայց փոխանակ խնդիրքը յարգելու, բարեկամը պատասխանում է արհամարհանքով. «Էհ, բան չունեմ, թող ով ուզում է, նա անէ՝ ես այդպիսի բաների համար գլուխ չունեմ...» Մի ուրիշն էլ չէ համբերում, երբ տեսնում է դատապարտելի վարմունք այնպիսի սրբակրօն հայրերի կողմից, որոնք պարտաւոր են օրինակ լինել ամենքին. սկսում է բողոքել, գործ և հաչիւ պահանջել ազգի համար ժողոված, բայց ծածկած փողերը յետ ուզել, իսկոյն լսվում են ձայներ. «քեզ ո՞վ է դատաւոր ուղարկել մեր գլխին, որ մեզնից հաչիւ ես պահանջում...»

Վերջապէս հերթը հասնում է հայ ուսանողներին, որոնց թիւը հարիւրներով է հաշվում Ղազանի, Խարկովի, Կիևի, Օդեսայի համալսարաններից սկսած մինչև Մոսկվայի, Պետերբուրգի և Դորպատի բարձրագոյն ճեմարանները։ Դուրս է գալիս մի անկեղծ մարդ, որը ասում է նոցա. «պարոններ, ախր ամօթ է, երբ ամեն հայ քիչ թէ շատ ճանաչում է իր պարտաւորութիւնը և ձեռքից եկածը անում, մինչդեռ դուք ոչինչ չէք անում, ոչինչ չէք ճանաչում։ Ձեզնից ոչ փող են ուզում, ոչ հաց. ձեզ խնդրում են միայն որ ամսական ձեր պարապ ժամերից տէնց մինը նուիրէք այն գործին, որի համար դուք ամենքից աւելի ընդունակ պիտի լինէք. եթէ չէք կարող ծանօթացնել օտարներին հայ դրականութեան և հայ ազգի հետ, ինչպէս հարկն է, գոնէ աշխատեցէք հասկացողութիւն տալ օտար պուբլիցիստներին հայ լրագրութեան վրա, թարգմանելով գոնէ այն աղէտալի անցքերը, որ պատահում են այժմ թիւրքաց Հայաստանում, դարևոր և անցեալ պատերազմների սոսկալի բանակատեղում և փոխադարձ ատելանց դաշտում... Աշխատեցէք այդպիսով հասկացնել, որ չատերի վրա կայ մի անփոխարինելի բարոյական պարտաւորութիւն՝ օգնել այն ազգին, որի անունը դեռ ևս արհամարհանքով է յիշվում նոցա լեզվում... Աշխատեցէք պրօպագանդա անել և գրաւել դէպի հայերը ամեն ազգի, ամեն մարդու համակրութիւնը, երբ հայ անունը մինչև հիմայ յայտնի է եղել միայն ինչպէս զզուանքի, ստորութեան և ատելութեան համանուն...»

Բայց ինչ էք կարծում, այս տեսակ իրաւացի խնդիրք, փոխանակ յարգվելու, փոխանակ ուշքի առնվելու, միայն զայրոյթ և բողոք է յարուցանում, վասն որոյ փոխանակ գործ սկսելու, ազգային հարցի մէջ միութիւն կազմելու, չատերը միայն երեխայական դէմոնստրացիաներ են կատարում և սպառնալիք ուղարկում արդարախօս մարդու դէմ, որին ուզում են հաւատացնել, թէ իրանք ուրիշ մարդիկ են, քան թէ նոքա, որոնք արդէն ակադէմիական նշաններով և գիտական դիպլոմներով ձիու նախիրի պէս թափառում են Թիֆլիսի փողոցներում և դաւառները ցրված կամ պարահանդէսներ են կառավարում, կամ գիշերները թղթախաղի մէջ լուսացնում... Երբ դէմոնստրացիա անողները ներկայումս չեն կատարում այն, ինչ կարող են կատարել, ապա ինչ իրաւունքով են նոքա հաստատում թէ չեն նման իրանց նախորդներին, ինչ երեսով են նոքա բողոքում և բողոքի տակ անունները ստորագրում։

Եթէ հայ ուսանողները պատճառ են բերում իրանց զբաղված լինելը, մէկը հարցնի թէ ո՞ր մարդն է աշխարհում իրան անգործ համարողը. անգործները միայն գերեզմանատանն են պառկած...

Ահա այսպիսի երևոյթներ են, որ տրորում են մարդու սիրտը, երբ նա մաքամոլոր ուզում է երբեմն մխիթարել իրան իր ազգի ապագայի յոյսով. այդ ժամանակ մի օրհասական գաղտնի ձայն նորան ասում է. «ողորմելի մարդ, ինչ տեղեր ես մտքդ տարածում. չես տեսնում ինչպէս են կատարում իրանց պարտաւորութիւնը նոքա, որոնք տեսնելով ազգի բոլոր ապագան մի սև խորխորատի ծայրին, միայն ծիծաղում են և լոկ իրանց վայելչութեան վրա մտածում... Այդ ժամանակ է միայն մարդ տեսնում թէ ինչ տխուր իրականութեան մէջ է ապրում...

Գ.Ր. Նիկողոսեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՓՕԹԻՑ

Ապրիլի 20-ին

Մենք՝ ներքոյ ստորագրեալներս Զատկի Յարութեան տօնի օրը բարեպատեհ համարեցինք Վանայ սովատանջ մեր արիւնակից եղբայրների և քոյրերի համար մի հանգանակութիւն անել։ Վասն որոյ զկնի պատարագին Մ. Տէր-Մկրտչեանցի յորդորական խօսքերից յետ գանձանակ շրջեցուցինք, որ և գոյացաւ երեսուն չորս ռուբլի 10 կոպ. (34 ր. 10 կ.)։ Իսկ յետ աւարտման պատարագին կազմեցինք մի ստորագրական թերթ խմբովին մանելով տուն տուն և ի չնորհս Քրիստոսի սուրբ Յարութեան ստորագրութիւնից գոյացաւ երկու հարիւր վաթսուն վեց ռուբլի 25 կոպ., ընդ ամենայն գոյացեալ երեք հարիւր քսան ռուբլի 35 կոպ.։ Ի սոյն ամենայն գոյացեալ գումարս ի ձեր ձեռամբ ի Ներքին Տեսութեան Ազգային Հիւանդանոցի Տիրոջ Գատաստանի առաջ, միացել են մի վսեմ զգացմունքի կապով, որ տվում է հայրենեաց սէր։

Հայրենեաց սէրը այնչափ յափշտակել է մարդկանց միտքը և տիրապետել սիրտը, որ նոքա էլ մոռացել են թէ ո՞վ է նոցա առաջնորդը որ տանում է թշնամեաց մեծամեծ բանակների դէմ՝ մի կոյս թէ մի սպարապետ, մի մսավաճառ թէ մի ազգապետ, մի հասարակ երէց թէ մի եպիսկոպոս, մի պատանի թէ մի փորձառու զօրավար, մի վերջին գռեհիկ թէ մի արքայազն իշխան։ Հայրենեաց սիրոյ ազդեցութեան տակ էլ մարդիկ այդ չեն որոշել, այլ հաւասար եռանդով հետևել են Յովհաննէ դ'Արկին և Բօնապարտին, Մինչինին և իշխան Պօժարսկիին, Կանարիսին և Խիսօլանտիին, մի տեղ մսավաճառ Կարա-Գէորգիին, միւս տեղ զօրավար Գարիբալդիին և այնպիսի առաջնորդների հրաւէրներին, որոնց չնորհիւ այսօր մեծացել են չատ նոր ազգեր և անկախութիւն ստացել՝ սերբիացիք, զարադաղցիք, յոյները, բուլգարները և նաև բոլգարները։ Մի ազգի մէջ յայտնված այդպիսի պատմական երևոյթը ամենաճարտարկերպով աւետել է այդ ազգին թէ նորա ապագան չէ կարող չքանալ ոչինչ հարուածից՝ ոչ բռնութեան դարևոր չղթայից, ոչ արեան գետերից, ոչ հրից, ոչ ջրից...

Ահա այսօր հայոց ազգի մեծամասնութիւնը կանգնած է մի սոսկալի անդունդի գլխին. այդ անդունդը սովն է, որ սպառնում է խորտակել տաճկաց Հայաստանը. ինչ ենք տեսնում մենք այն ազգի մէջ, որը այնչափ վստահ յոյսեր է կապում իր ապագայի վրա։ Մենք տեսնում ենք հետևեալը։ Մի կին, մի օրիորդ այնչափ ազնիւ է գտնվում, որ էլ չը կարողանալով իրան զսպել, ձեռքը մի կաւոր թուղթ առած սկսում է դուռ դուռ ընկնել և երեք միլիոն եղբայրների կորստի անունով ողորմութիւն հաւաքել. իսկոյն դուրս է գալիս մի մեծափոր ուրեմն և պատկառելի Եպիսկոպոս, որը հարցնում է արհամարհանքով իր աթոռի բարձրութիւնից. «ո՞վ է դա, ո՞վ է դորան իրաւունք տուել...»

Մի երիտասարդ, մի օրական աշխատանքով ապրող թշուառ մարդ վեր է առնում թաթախը և նոյն ազնիւ նպատակով սկսում է փողոցէ փողոց թափառել, սրա, նորա առաջ կանգնել, վիզ ծռել, աղաչել, խոնարհիլ, իսկոյն գտնվում են մարդասէր աղաներ, որոնք հաւանում են նորան նորա արած յանդուգն վարմունքի համար, և օրական հացից զրկում։ Այսօր մի լրագիր աւելի արիւն է գտնվում, աւելի սրատես յայտնվում և մինչև ուրիշների խօսելը, սկսում է ինքը խօսել և զգուշացնել ազգին սպառնող այս ինչ, այն ինչ աղէտների դէմ, իսկոյն դուրս են գալիս միւսները, որոնք քարոզում են բարձրաձայն, ասելով. «մի հաւատաք դորան, դորա ասածը բոլորն էլ յիմարութիւն է...» Այսօր մէկը տեսնելով իր չորս կողմը ոսկի և չռայլութիւն, իսկ մէկ թշուառ և իր սրտի մտիկ երկրում՝ մահի տեսակներից ամենավատը, ամենասարսափելին և զանազան ծանր հանգամանքներից ճնշված ինքը ոչինչ չէ կարողանում ձեռնարկել, վասն որոյ դիմում է իր ընդունակ բարեկամին, խնդրելով որ նա առաջ ընկնի և բարի օրինակ տայ անտարբերներին, բայց փոխանակ խնդիրքը յարգելու, բարեկամը պատասխանում է արհամարհանքով. «Էհ, բան չունեմ, թող ով ուզում է, նա անէ՝ ես այդպիսի բաների համար գլուխ չունեմ...» Մի ուրիշն էլ չէ համբերում, երբ տեսնում է դատապարտելի վարմունք այնպիսի սրբակրօն հայրերի կողմից, որոնք պարտաւոր են օրինակ լինել ամենքին. սկսում է բողոքել, գործ և հաչիւ պահանջել ազգի համար ժողոված, բայց ծածկած փողերը յետ ուզել, իսկոյն լսվում են ձայներ. «քեզ ո՞վ է դատաւոր ուղարկել մեր գլխին, որ մեզնից հաչիւ ես պահանջում...»

Վերջապէս հերթը հասնում է հայ ուսանողներին, որոնց թիւը հարիւրներով է հաշվում Ղազանի, Խարկովի, Կիևի, Օդեսայի համալսարաններից սկսած մինչև Մոսկվայի, Պետերբուրգի և Դորպատի բարձրագոյն ճեմարանները։ Դուրս է գալիս մի անկեղծ մարդ, որը ասում է նոցա. «պարոններ, ախր ամօթ է, երբ ամեն հայ քիչ թէ շատ ճանաչում է իր պարտաւորութիւնը և ձեռքից եկածը անում, մինչդեռ դուք ոչինչ չէք անում, ոչինչ չէք ճանաչում։ Ձեզնից ոչ փող են ուզում, ոչ հաց. ձեզ խնդրում են միայն որ ամսական ձեր պարապ ժամերից տէնց մինը նուիրէք այն գործին, որի համար դուք ամենքից աւելի ընդունակ պիտի լինէք. եթէ չէք կարող ծանօթացնել օտարներին հայ դրականութեան և հայ ազգի հետ, ինչպէս հարկն է, գոնէ աշխատեցէք հասկացողութիւն տալ օտար պուբլիցիստներին հայ լրագրութեան վրա, թարգմանելով գոնէ այն աղէտալի անցքերը, որ պատահում են այժմ թիւրքաց Հայաստանում, դարևոր և անցեալ պատերազմների սոսկալի բանակատեղում և փոխադարձ ատելանց դաշտում... Աշխատեցէք այդպիսով հասկացնել, որ չատերի վրա կայ մի անփոխարինելի բարոյական պարտաւորութիւն՝ օգնել այն ազգին, որի անունը դեռ ևս արհամարհանքով է յիշվում նոցա լեզվում... Աշխատեցէք պրօպագանդա անել և գրաւել դէպի հայերը ամեն ազգի, ամեն մարդու համակրութիւնը, երբ հայ անունը մինչև հիմայ յայտնի է եղել միայն ինչպէս զզուանքի, ստորութեան և ատելութեան համանուն...»

Բայց ինչ էք կարծում, այս տեսակ իրաւացի խնդիրք, փոխանակ յարգվելու, փոխանակ ուշքի առնվելու, միայն զայրոյթ և բողոք է յարուցանում, վասն որոյ փոխանակ գործ սկսելու, ազգային հարցի մէջ միութիւն կազմելու, չատերը միայն երեխայական դէմոնստրացիաներ են կատարում և սպառնալիք ուղարկում արդարախօս մարդու դէմ, որին ուզում են հաւատացնել, թէ իրանք ուրիշ մարդիկ են, քան թէ նոքա, որոնք արդէն ակադէմիական նշաններով և գիտական դիպլոմներով ձիու նախիրի պէս թափառում են Թիֆլիսի փողոցներում և դաւառները ցրված կամ պարահանդէսներ են կառավարում, կամ գիշերները թղթախաղի մէջ լուսացնում... Երբ դէմոնստրացիա անողները ներկայումս չեն կատարում այն, ինչ կարող են կատարել, ապա ինչ իրաւունքով են նոքա հաստատում թէ չեն նման իրանց նախորդներին, ինչ երեսով են նոքա բողոքում և բողոքի տակ անունները ստորագրում։

Եթէ հայ ուսանողները պատճառ են բերում իրանց զբաղված լինելը, մէկը հարցնի թէ ո՞ր մարդն է աշխարհում իրան անգործ համարողը. անգործները միայն գերեզմանատանն են պառկած...

Ահա այսպիսի երևոյթներ են, որ տրորում են մարդու սիրտը, երբ նա մաքամոլոր ուզում է երբեմն մխիթարել իրան իր ազգի ապագայի յոյսով. այդ ժամանակ մի օրհասական գաղտնի ձայն նորան ասում է. «ողորմելի մարդ, ինչ տեղեր ես մտքդ տարածում. չես տեսնում ինչպէս են կատարում իրանց պարտաւորութիւնը նոքա, որոնք տեսնելով ազգի բոլոր ապագան մի սև խորխորատի ծայրին, միայն ծիծաղում են և լոկ իրանց վայելչութեան վրա մտածում... Այդ ժամանակ է միայն մարդ տեսնում թէ ինչ տխուր իրականութեան մէջ է ապրում...

Գ.Ր. Նիկողոսեան

դամենն երեք հարիւր ռուբլի 35 կ. Նամակիս հետ ուղարկում ենք մէկ ծրարում ամփոփված պ. Յովհաննէս Հասան-Ջալալեանցի ձեռքով ամբողջ լիովին գումարը։ Խնդրում ենք յարգելի խմբագրութեանդ ուղարկել ուր հարկն է և նուիրատուաց անուններն ու ազգանունները հրատարակել պատուական «Մշակ» լրագրիդ միջոցաւ 'ի միամտութիւն նուիրատուաց։

Հանգանակութիւնից ժողովվեցաւ եկեղեցու մէջ 34 ր. 10 կ.։

Մկրտիչ Տէր Մկրտչեանց 1 ր., Յարութիւն Զուբիդեանց 1 ր., Ալէքսանդր Գեօմիւրջեանց 3 ր., Յովհաննէս Պետրոսեան 3 ր., Սեդրակ Հասան-Ջալալեանց 4 ր., Բաղրատ Շեխիեանց 1 ր., Գրիգոր Մասումեանց 1 ր., Յովհաննէս Թիւրքիեան 5 ր., Ս. Փարսադանեանց 2 ր., Ս. Ղամբարով 1 ր., Մ. Բարխուդարեանց 1 ր., Ղ. Տէր-Ղազարեանց 3 ր., Ի. Բաբալով 2 ր., Ի. Հասան-Ջալալեանց 10 ր., տիկին Սոփիա 5 ր., Կ. Կանջումեանց 3 ր., Կ. Դանիէլբէկեանց 1 ր., Բ. Արզումեանց 1 ր., Ռ. Արծրունի 3 ր., Կ. Կօկիբերիոզէ (վրացի) 3 ր., Բ. Քազարով 1 ր., Ա. Տէր-Դանիէլեանց 1 ր. Կ. Պոպով 10 ր., Ն. Մելիք-Հայկազեանց 10 ր., Կ. Տէր-Սիմոնեանց (չուլավերցի) 1 ր., Ե. Եարալեանց 1 ր., Ի. Կիկալով 1 ր., Մ. Գեօմուրջեան 5 ր., Կ. Սամոիով (վրացի) 1 ր., Զ. Կիսլով (ռուս) 1 ր., Կ. Կարվանայ (յոյն) 1 ր., Ս. Սարդարով 1 ր., Ա. Բաժբեաք-Մելիքով 1 ր., Գ. Սարդարեանց 1 ր., Յ. Շեխեանց 3 ր., Կ. Բանայէ (յոյն) 1 ր., Գ. Եղիսէրեան (օրիորդ) 3 ր., Հ. Թիւրքիեան (տիկին) 1 ր., Յ. Ալեանակէ 1 ր., Գ. Տէր-Յովակիմեան 1 ր., Մ. Ադումեանց 1 ր., Ա. Մխիթարեան 1 ր., Պ. Զուբիդեանց 1 ր. 50 կ., Ա. Զուբիդեան (տիկին) 1 ր. 50 կ., Ա. Թիւրքիեան (տիկին) 2 ր., Ա. Մեղաւորեան (օրիորդ) 3 ր., Բ. Վարդանեան (օրիորդ) 2 ր., Տ. Տէր-Յովակիմեան (տիկին) 2 ր., Ա. Աւետիսեան (օրիորդ) 1 ր., Ա. Մովսէսեան չուչեցի 3 ր., Խ. Խալաթեանց 1 ր., Մահտեսի Յովհաննէսեանց 5 ր., Ս. Շարաղով 1 ր., Ն. Մելիքով 1 ր., Մ. Նազարով 1 ր., Յ. Բաբլով 50 կ., Բ. Մարտիրոսեան 1 ր., Ն. Տէր-Առաքելով 1 ր., Խ. Սարքիսով 1 ր., Կ. Քօչարով 1 ր., Գ. Յովհաննէսով 50 կ., Յ. Հայրապետով 1 ր., Յ. Առաքելով 1 ր., Մ. Ղազարով 1 ր., Ս. Դէորքով 1 ր., Շ. Բաբաեվ 1 ր., Ղ. Ակօբով 1 ր., Ա. Աւետիքով 1 ր., Ա. Յարութիւնով 1 ր., Ա. Նազարով 1 ր., Մ. Հախնազարով 1 ր., Շ. մահտեսի Աւետիքով 1 ր., Մ. Պողոսով 1 ր., Զուռնաչի Խուդայ 40 կ., Յ. Ակօբով 1 ր., Ս. Յարութիւնով 1 ր., Գ. Հախվերդով 1 ր., Հ. Մահտեսի Դէորքով 40 կ., Զ. Մօսէսով 1 ր., Գ. Աւաքով 60 կ., Հայ ոմն 55 կ., Ա. Միրզեով 60 կ., Հ. Ակօբով 40 կ., Բ. Բահրամով 40կ., Ա. Մօսէսով 50 կ., (Վերոյիշված 12 անձինք փոթիի հայ՝ մշակներն են։) Ա. փայելեանց 6 ր., Ի. Ջերկվելով 1 ր., Ա. Ղազարով 3 ր., Մուստաֆայ Հաջի-Իբրահիմ-Օղլի (տաճիկ) 1 ր., Զ. Ջանջաւրդէ (վրացի) 1 ր., Իբրահիմ Ջենալ (տաճիկ) 1 ր., Ա. Գեօմուրջեան 2 ր., Ա. Ալանիա (վրացի) 1 ր., Մ. Ալանիա (վրացի) 2 ր., Ե. Ոսկանեան 1 ր., Ս. Ծիաղզէ (վրացի) 1 ր., Ա. Մարքարով (մշակ) 1 ր., Փ. Ծիաղզէ (վրացի) 50 կ., Մ. Խալաթով 1 ր., Կ. Մեսաքսեա (յոյն) 1 ր., Ֆ. Լեյբման (հրէայ) 1 ր., Կ. Կանդալակի (վրացի) 2 ր., Գ. Խեչինով (վրացի) 2 ր., Ս. Դաւլիեվ 1 ր., Մ. Հասան Ջալալեանց 1 ր. 50 կ., (մանուկներ) Ն. Տէր-Յակոբեան 1 ր., Գ. Տէր-Յակոբեանց 1 ր., Ն. Ռաֆայէլեան (տիկին) 3 ր., Շ. Տէր-Ղազարեան (տիկին) 2 ր., Մ. Ռաֆայէլեան (տիկին) 2 ր., Ա.... 20 կ., Ստեփան Աւիջեան 20 կ., Ս. Ինջիեան 1 ր., Գ. Վանիցեան 5 ր., Տ. Վանիցեան 10 ր., Խ. Խումարաղզէ 5 ր., Ալէքսանդր Մելիք Հայկազեան (յիսուն ր.) 50 ր., Կ. Մուրադեան 3 ր., ընդհանուր գումարն է 300 ր. 35 կ.։

Մ. Տէր-Մկրտչեանց Բանանցեցի, Ս. Ն. Ջալալեանց, Գրիգոր Մանասեանց, Ի. Շեխեանց (չուչեցի), Յովհաննէս Թիւրքիան, Յովհաննէս Պետրոսեան, Ա. Բեօմիւրճեան (տրապիզոնցիք)։

ՆԱՄԱԿ ՂԱՐՍԻՑ

—

16 ապրիլի

Վերջապէս Ղարսը ազատվեցաւ մի դժուարութիւնից, այն է անողորմ ցրտից և ձիւնից. մի չաբաթ է համարեա, որ անընդհատ անձրևներ են գալիս։ Քաղաքի սահմանը չրջապատող արևելեան կողմի բարձրանդակներից ու սարաշղթաներից ձիւնը հալուելով, վտակ վտակ գալիս է և թափվում է «Ցառ-Բողազ» անուանեալ հեղեղատի մէջ, որը անցկենալով Ղարատաղի տակից, բաւական տարածութեամբ ծածկել է արդէն թիւրքաց երկու գերեզմանոցների մէջ տեղում գտնված հարթավայրը և բազարի կէսը, այնպէս որ այն տեղում գտնված տախտակաշէն փոքրիկ կրպակները այդ դեղեցիկ լճակի երեսին լողալով և միւս կողմից մալականները փոքրիկ մակոյկների վրա նստած ջրի մակերեսթի վրա փայտեր որսալով, մեր երբեմն չոր ու ցամաք Ղարսը մի ծովափնեայ քաղաքի են նմանեցնում։ Մի առանձին տեսարան ևս ներկայացնում է գեղը արևմտեան կողմից իր անագին յորդութեամբ. միով բանիւ Ղարսը այժմ մի կատարեալ Թերակղզի է։ Այս ամենը լաւ, բայց սըրանցով դեռ ընակիչները չեն կարող ուրախանալ. նրանցից մեծ մասի՝ մանաւանդ գիւղերում վերաբնակվող ալաշկերտցի գաղթականների դրութիւնը անտանելի է. թէպէտ երկրագործ դասը ազատվեցաւ մի մեծ դժուարութիւնից (անասուններին կերակրելուց), այժմ տեղ-տեղ տաւարները հանդում արածացնում են։ Անասունների մեծ մասը լաւ չը կերակրվելու պատճառով, ոսոտիկ լղարացած, կոչնչանան, մնացածն էլ համարեա աչխատացնելու համար անդործադրելի են։ Կենսական պիտոյքները հետզհետէ աւելի թանդանում են. ալիւրի պուդը այժմ 5 ր. 60 կոպէկով է ծախվում, բրինձը 8 ռուբլի, ձուն 7 կ. մինը, իսկ ցորեան և գարի ծախող բնաւ չը կայ։ Լսում ենք հաստատ աղբիւրներից, որ քաղաքային իշխանութիւնը, մօտ 80,000 ր. փող է յանձնել ոսոիկաններին գիւղացիների վրա բաժանելու և այս օրերում մարդիկ էլ ուղարկել է այլ և այլ տեղերից սերմնացու ցորեան բերելու համար, որ նոյնպէս բաժանէ թէ Ղարսում և թէ գիւղերում բնակվող երկրագործներին։ Ալաշկերտցի գաղթականներից մի մարդ Սարիքուիլ գիւղացի, մօտ 12 օր հաց չը գտնելով իր թշուառ ընտանիքի համար, անճարացած անցեալ օրերում իր հարիւր ռուբլ արժողութեամբ լծու գոմէշը մորթում է և նրանով մի քանի օր կերակրում նրանց։ Չը գիտեմ ուր մնաց Ղարսում գտնվող ջերմանդ նուիրատուների յանձն աղքատաց հաւաքված 2500 ռուբլին, մինչև երբ պէտք է պահեն մանաւոդովի պ. պ. անդամները, էլ ինչ օրուան համար է։

Այստեղի ուսուցչական խումբը գրադարանի վարչութեան անդամների մասնակցութեամբ երկրորդ անգամ տուեցին ներկայացումն, մարտի 23-ին «Զէնեաթ Ղենեաթ» և «Էս էլ քի մօցիքլութիւն» յօդուտ աղքատաց և ռուսաց դպրոցին քաղաքիս, իսկ ապրիլի 7-ին ներկայացրին «Արշակ Բ.» և «Գիշերուան սարը խէր է» յօդուտ հայոց երկսեռ դպրոցների։ Առհասարակ բոլոր ներկայացումները անսպասելի յաջողութեամբ անցան. այս վերջին ներկայացումից դոյացած արդիւնքը հասնում է մօտ 180 ռուբլու, ծախսը աննչան է։—Ինչպէս հաւաստիանում ենք, յիշեալ պարոնները մտադիր են մօտ օրերումս մի ներկայացումն ևս տալ յօդուտ Վանայ սովելոց։ Արդէն պ. բժ. Ա. Ղազարեանցը և բժ. Գ. Կաճկաճեանցը սկսել են ստորագրութեամբ նուէրներ հաւաքել յանուն Վասպուրականի սովելոց. բժ. Ղազարեանցի ժողովուրդի մօտ ունեցած համարումն չատ օգտաւէտ ապագայ է խոստանում նուէրներ հաւաքելում։ Չենք կարող լռել և չը յայտնել մեր առանձին խորին շնորհակալութիւնը բժ. Ղազարեանցին և նրա ազնուամիտ ամուսնուն, ինչպէս թատրոններին մասնակցելու գործում, նոյնպէս և ուսումնարանի, որոնք իբրև հարազատ լծակիցներ միշտ միասին են գործում, ձրի բոլորովին, վերառնելով առաջինը տեսչի, վերջինը տեսչուհու պաշտօններ երկսեռ դպրոցներում, ուր ոչ սակաւ եռանդով են շարունակում գործել։

Ղարսում թագաւորում է և մի անմխիթար երևոյթ, որ նոյնպէս չէ կարելի չը յայտնել ցաւօք սրտի, այն է ընիկների ատելութիւնը կամ, պարզ ասենք, կոյր մոլորութիւնը դէպի թատրոնական խումբը ի շնորհս մի երկու տգէտ և մոլեռանդ հոգևորականների։ Յուսով ենք, որ մեր թատրոնական խումբը կը յարգէ մեր առած համեստ խորհուրդը, այսինքն ոչինչ կը համարի այսպիսի յիմարաբանութիւնները և գործը եռանդով կը շարունակէ յիշելով հասարակաց առածը՝ «Փչի քացուց բեղամաղ չեն լինի։

Օտարական

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կովկասեան ուսումնարանական հոգաբարձութեան միջոցով շնորհակալութեամբ ստացանք 54 ռուբլ, որ ԲԱԳՈՒԻ բեալական դպրոցի աշակերտները հանգանակութեամբ ժողովելով նուիրեցին յօդուտ Վանի սովատանջների։ Փողը ստացանք նահանգական գանձատունից։

—

Պ. Սմբատ Հովսեփեանց հասցրել է մեզ 15 ր. 30 կ. յօդուտ Վանի սովեալների, որ նա հաւաքել է հանգանակութեամբ։ Նուիրատուների անունները կը տպագրենք։

—

Ս. Պետերբուրգի «Herold» լրագիրը ասում է թէ մի անծանօթ անձն հարիւր ռուբլ է տուել քաղաքապետութեանը յօդուտ Կովկասեան սովեալների։ Այս գումարը ըստ որոշման ուղարկված է Կովկասեան փոխարքայի գլխաւոր կառավարութեանը։

—

Կիրակի, մայիսի 11-ին, հայ սիրողները մի ներկայացումն տուեցին Արծրունու թատրոնում։ Խաղացին առաջին անգամ «Հաշտարար Դատաւորի մօտ» կոմէդիա երեք գործողութեամբ, փոխադրութիւն Յ. Տէր-Գրիգորեանցի և նոյնպէս առաջին անգամ «Ցօտոս» վոդէվիլը, թարգմանութիւն Յ. Տէր Գրիգորեանցի։ Փոխադրութիւնները չատ լաւ են և խաղն էլ չատ լաւ անցաւ։ Հասարակութիւնը, որ բազմաթիւ չէր, չատ գոհ դուրս եկաւ թատրոնից։ Այդ թեթև, դիւրամարս և հասկանալի ներկայացումն հակասութիւն է կազմում ըստ ամենայն տիպական չկոլային պատկանող կոմիտէի ներկայացումներին։ Անտարկաներում տիկին Տէր-Գրիգորեան-Փաշայեան մի քանի երգեր երգեց և մեծ ծափահարութիւններ ստացաւ։

—

Ստացանք Կ. Պոլսից մի քանի բրոշիւրներ Քբրանսերէն լեզուով հայոց խնդրի վրա և Հայաստանում մտցնվելի վերանորոգութիւնների վրա։ Այդ գրքոյկների վրա դարձեալ կը խոսենք։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՈՎԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

—

Հայաստանի մէջ տիրած սարսափելի սովն ազգային և քաղաքական կարևորագոյն խնդիրն է մեզ համար, որովհետև ազգային գոյութեան խնդիրը վեր է ամեն քաղաքականութենէ և ամեն խնդրէ։ Մասամբ հնձոց նուազութեան, մասամբ յոռի վարչութեան և մասամբ ալ երկրին անապահով վիճակին և աւազակարարոյ ցեղերու ասպատակութեանց պատճառաւ, իրաց այնպիսի վիճակ մ'երևան եկած է Հայաստանի մէկ մեծ մասին մէջ, որ մահացու հարուած մը տալ կ'ըսպառնայ մեր հպարաւոր ազգայնոց, որք արդէն նախանձելի վիճակ մը չունէին, և որոց պատերազմն ալ իւր ամեն տեսակ չարեաց ծանր վնասներ տուած էր։ Իրողութիւնն այս է որ, ինչպէս անցեալ տարի կը վախցուէր, Վանայ նահանգին և Պայազիտի ուր Ալաշկերտի գաւառաց և Բասէնի դաշտին բընակիչներն, և մանաւորապէս երկրագործ Հայ ժողովուրդը սասիկ սովէ մը կը տառապի ներկայ ձմերային եղանակին սկսելէն 'ի վեր, և մինչև յառաջիկայ հնձոց ժամանակ, մանաւանդ մարտ և ապրիլ ամսոց մէջ, հասարակաց օգնութենէն զատ ապրուստի միջոց չունին։ Վանէն արժանահաւատ անձի մը կողմանէ անցեալ օր մեզ ուղղեալ նամակ մը կը նին։ Վանէն արժանահաւատ անձի մը կողմանէ անցեալ օր մեզ ուղղեալ նամակ մը կը ծանուցանէր թէ Վասպուրականի 150 հազար Հայ ժողովուրդն այս աղետին ենթարկուած է։ Ոչ նուազ ձշմարիտ է թէ այդ թուոյն երկու երրորդին մօտ Հայ ժողովուրդ մը նոյնչափ սարսափելի վիճակ մ'ունի Պայազիտի և Կարնոյ կողմն։ Այսպէս, քառորդ միլիօնի հասնող Հայ անհատք, իրարմէ աւելի կամ նուազ տարբերութեամբ, մահու և կենաց միջև կը տատանին Հայաստանի կարևորագոյն մասին մէջ։ Ոչ նուազ խղճալի է Տիարպէքիրի կողմն, և Քրդաստանի ներսի կողմերը գտնվող Հայոց և ուրիշ ժողովրդոց վիճակը։ Ռուսական Հայաստանի բնակիչք ալ լաւագոյն վիճակ մը չունին։

Այս է ահա ներկայ կացութիւնն, և ամեն մարդ, մանաւանդ ամեն Հայ, անշուշտ համամիտ պիտի լինի մեզ, երբ ըսենք թէ անդարմանելի կորուստք և արկածք կրնան ծագիլ եթէ ամբողջ ազգը՝ վտանգին մեծութիւնն ընբռնելով անձնուիրաբար օգնութեան ձեռք չը կարկառէ իւր սովալլուկ ազգակցաց։ Արդարև, Վասպուրականի կողմերի Հայ տարրն արդէն դառն հարուած կրած է ներկայ աղետէն։ Միայն մէկ անգամէն գեղջի Հայոց չորս հարիւրի չափ ընտանիքներ, մասամբ թշուառութենէ և մասամբ Քրդաց աւարառութիւններէն սպիտակ, թողեր իրենց ծննդեան վայրն և դէպի Պարսկաստան գաղթեր են, ուր թշուառագոյն վիճակ մը կը սպասէր իրենց։ Վասպուրականի ուրիշ կողմերէն ալ այսպիսի Հայկական գաղթականութիւնք տեղի ունեցեր են ամենաթշուառ պայմանաց ներքև։ Արդէն մեր ժամանակակից պատմութեան դառն ճշմարտութիւններին մին է, որ ամենայաջող պարագայից մէջ կատարված Հայ գաղթականութիւններէն անգամ նոյնքան կորուստներ եղած են ազգին թէ նիւթապէս և թէ բարոյապէս։ Թշուառութիւնն ու հարստահարութիւնք էին որ քառորդ դար առաջ Վասպուրականի մէջ Տզմուտ գետի (Պէնտիմահի) և Ապարանի դաշտին, միով բանիւ Վանայ և Պայազիտի միջև գտնուող այն դրախտային երկրին հայ գեղացիներն սպիտեցին Ռուսիա գաղթել։ Նրաւ է որ այժմ այդ գեղացւոց մէկ մասի իրենց նոր հայրենեաց մէջ նիւթապէս կարելի եղածին չափ բարեբաստիկ կացութիւն մ'ունենալով հանդերձ՝ կը հառաչէ իր հայրենի երկրին համար, և ստուգիւ գիտենալով որ այդ Հայ գաղթականաց գոնէ մէկ մասն այժմ ամեն զոհողութիւն իւր աչքը պիտի առնուր վերադառնալու համար իւր հայրենի երկրին մի այնպիսի տեղն, որոյ հին յիշատակները միշտ քաղցր են ամեն Հայու։ Բայց գաղտնի ձեռք մ'արդէն օգուտ քաղած է իրաց այնպիսի վիճակէ մը զոր պարզապէս միայն կրնան անհոգութեան կամ սովորական դիպաց արդիւնք համարել։ որովհետև Հայ տարրին թողած մէն մի մասնաչափ գետնաշատով Քուրդ տարրին ձեռքն անցած է, որ այժմ զօրաւորապէս հաստատուած է։ Վասպուրականի այդ հիւսիսային մասին մէջ (ինչպէս յայտնի է՝ Վարդանանց պատերազմի յիշատակովը սրբազործեալ է), և ընդհանրապէս խօսելով, Վանէն Պայազիտ տանող երկրը, կէս դար առաջ Հայ տարրին զօրաւորագոյն դիրքերէն մին, այժմ գրեթէ բոլորով Քրդաբնակ գաւառ մ'է...։ Այս է ահա միշտ Հայկական Թշուառութեանց և Հայկական գաղթականութեանց պատմութիւնը, թէ Բասէնի կողմն և թէ Ալաշկերտի լերանց վրայ։ Այս է ահա որ իրաւունք կուտայ Տ. Սարգսեանցի, այսինքն՝ Վանայ սովելոց յանձնախմբին քարտուղարին՝ երբ անցեալ շաբթու առ մեզ ուղղած մէկ կարևոր նամակին մէջ կրսէր...։ «Նիթէ անմիջական օգնութիւններ չը հասանին, մինչև ցարդ ազգայնոց վերակենդանութեան մասին մեր ունեցած ջանք և յոյսերը կարող են ի դերև ելնիլ։ Վասն զի երբ տարանայ կամ մեռնի Վասպուրականը, Հայ և Հայաստան կը մեռնին...»

Ուստի, յանուն ազգային գոյութեան, այսպէս սարսափելի վտանգի մը մէջ կը գտնուի, յանուն Քրիստոնէական Ա. սկզբանց որք են զթութիւն և ողորմութիւն, յանուն մարդասիրութեան, որ միակ յոյսն է այժմ մեր հազարաւոր տարաբաղդ ազգայնոց, յանուն վերջապէս մարդկային ամենափոքուկ և ամենավսեմ զգացմանց, որք տարակոյս չը կայ պիտի յուզուին այդքան թշուառութեան առջև, հրաւէր կը կարդամք մեր բոլոր ազգայնոց, Թուրքաբնակաց և Ռուսաբնակաց, կամ ուր որ ալ լինին, ինչ սեռէ որ լինին, ինչ աստիճանի կարողութիւն որ ունենան, հրաւէր կը կարդամք, որպէս զի ներկայ վիճակի համեմատութեամբ յօգնութիւն փութան իրենց Հայաստանցի եղբարց և քերց, հարց մարց, որպէս զի սոքա, վայրկենական յուսահատութեան դէմ դնելու կարող լինին,

իրենց հայրենի երկրին մէջ զանեն հացի պառառ մը՝ ողջ մնալու համար, մինչև որ առատ հունձք մը լաւագոյն օրեր բերէ իրենց:

Առնուած լուրերն ապեկաուր են: Նոքա որք չեն գաղթեր, կամ գաղթել ուզելով ճանրան չեն մեռնիր, իրենց գիւղերուն մէջ ժամ ի ժամ մահուան կը սպասեն: Կը ցաւիմք ըսել թէ Վասպուրականի մէջ մինչև ցարդ սովէն մեռնողներ ալ պակաս չեն եղած և բաւական է որ մարդ սարսռի, երբ մտածէ որ՝ եթէ մինչև ցարդ մեր առած տեղեկութեանց համեմատ, որք բնականաբար յոյժ ցանցառ են հաղորդակցական դժուարութեանց պատճառաւ, Հայաստանի սովատանջ գաւառաց մէջ իրաց վիճակն այսչափ յուսահատական է, հապա ո՞րչափ դառն վիճակ մը պիտի պարզուէր մեր առջև՝ եթէ ամեն մէկ գիւղի կամ վիճակի կրած տառապանքները մի առ մի նկարագրուէին մեզ: Կը յուսամք սակայն, որ արդի կացութեան դառնութիւնը ճանչելու և ըստ այնմ օգնութեան ձեռք կարկառելու համար՝ ազգն այդպիսի նկարագիրներու պէտք չը պիտի ունենայ: Լոնտրայի անգղիական յանձնախումբն ալ, որոյ անդամ են Լորտ Սալիսպրի, Լորտ Քարնարվոն Լորտ Շաֆթբրսպրրի, Քէնթէրպրրիի արքեպիսկոպոսը, Սրբ Ակնօրա Քէմպալ, Սրբ Հէնրի Բօլինսըն, և այլ նշանաւոր անձինք առ Անգղիական ժողովուրդն ուղղած հրաւէրին մէջ յոյժ տխուր կերպիւ կը նկարագրէ իրաց վիճակն: Ամեն օր, կըսէ, իրարու վրա հեռագրեր կուգան սովատանջ գաւառներէն՝ ծանուցանող թէ սովն հետզհետէ կը սաստկանայ և թէ հազարաւոր մարդիկ պիտի կորսուին, եթէ մինչև հնձոց ժամանակ առատ օգնութիւնք չը հասնին փութով: Պ. Թրօթթը, Պ. Քլէյթըն և ուրիշ հիւպատոսք՝ հանգանակութեանց միջոցաւ անմիջապէս օգնութիւն հասցնելու հարկը կը յայտնեն:

Գոհութեան արժանի է որ մայրաքաղաքիս մէջ կազմեալ Հայկական յանձնախումբը մինչև ցարդ երեք հազար ռուբլի գումար հաւաքեց: Բայց ցաւալի է մտածել, որ ուրիշ սովատանջ գաւառները մէկ կողմ թողլով, մի միայն Վանայ և Կարնոյ նահանգաց մէջ տիրող թշուառութեան առջև իսկ, այդ երեք ամսուան ջանից արդիւնքն եղող 3000 ռուբլին շատ թեթև կամ սակաւ օգնութիւն մը պիտի լինի: Իրաւ է որ մինչև ցարդ այդ գումարը կազմելու համար սովորականէն յոյժ աւելի քանակութեամբ ազգայինք մասնակցեցան հանգանակութեան, և թէ ինչպէս Օրմանեան Գերաշնորհ Տ. Մաղաքիա վարդապետ մեծ իրաւամբ կը դիտէր իւր «Կարօտ եմք» ճառին մէջ, այս պարագայն կը ցուցնէ որ ազգին մէջ քրիստոնէական և ազգային զգացմունք միշտ կենդանի են, թէև հանգանակութեան մասնակցողք նիւթական աւելի յաջող վիճակ մը չունին աւելի արդիւնաւոր հանգանակութիւն մը զոյացնելու համար: Այսու ամենայնիւ կը յուսամք որ այսուհետև ոչ միայն հանգանակութեան չը մասնակցած ազգայինք պիտի փութան իրենց լումայն դրկել այսպիսի մարդասիրական և ազգասիրական գործի մը համար, այլ և նոքա որ մինչև ցարդ մասնակցած են, ամեն անգամ որ սեղան կը նստին, պիտի յիշեն որ մեր հայրենի երկրին մէջ ալ կան հազարաւոր հայ մանկտիք, հայ կանայք, հայ ծերունիք, միով բանիւ, բազմաթիւ հայ ժողովուրդք, որք ամեն օր հացի պէտք ունին, և միանգամ ընդ միշտ պատառ մը հաց ուտելով չեն կրնար ամիսներով կենդանի մնալ:

Գալով Լոնտրայէն Անգղիացւոց միջոցաւ դրկուելիք օգնութեան, կը ցաւիմք որ չենք կրնար փոխել մեր այն գաղափարը թէ գործն եթէ Հայաստանի հայոց օգնութիւն հասցնելու վրա է, «Առատաւատ շատ բարձրն է, և Անգղիա շատ հեռին». խօսք մը զոր ժամանակաւ յուսահատ ժողովուրդ մը (Լեհացիք) գործածած են, երբ իրենցմէ զատ մէկէ մը յոյս չունէին ազգային գոյութիւնը պաշտպանելու: Արդարև Անգղիոյ ժողովուրդը նոյն իսկ բրիտանական կղզեաց մի մասն եղող Իրլանդիոյ աղքատաց և սովելոց համար, ինչպէս նաև ուրիշ նպատակներու համար միշտ հանգանակութիւններ ընելու զբաղեալ լինելով, ակներև կը տեսնուի որ հանգանակիչ յանձնախմբին ջանից հակառակ, ըստ բաւականին ուշադրութիւն չընծայեր Սախոյ մէկ հեռաւոր երկրին մէջ ժողովրդեան ենթարկուած դառն վիճակին: Ուստի թէև յիշեալ անգղիական յանձնախումբն երկու ամսէ ի վեր պաշտօն կը վարէ, Թայմզի մարտ 4 թուականաւ թերթին մէջ կը տեսնեմք որ հասկնա թէ հազար ռսկի կրցած է հաւաքել ցարդ: Ասկէց զատ, պէտք չէ կարծել թէ Անգղիոյ մէջ եղած հանգանակութիւնը մի միայն հայոց համար է, և մինչև իսկ պէտք չէ կարծել թէ Վասպուրականի, Աշխէրտի և Բասենի հայք, Քրդաստանի քրդաց հաւասար ատաձնաւ օգնութիւն պիտի ստանան: Զայս հաստատել կը թուի Անգղիական յանձնախմբին Թայմզի յիշեալ թուոյն մէջ ըրած այն յայտարարութիւնը թէ մինչև ցարդ իւր հանգանակած գումարէն չորս հարիւր ռսկին Տիգրանակերտ ղրկած է, իսկ երեք հարիւր ռսկին Մուսուլ: Մինչև ցարդ Վանայ կամ Կարնոյ խօսքը չը կայ, և թէպէտ Կ. Պոլսէն Ռուսերի գործակալութեան միջոցաւ փետր. 28 թուականաւ անգղիական լրագրաց քաշուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ «Լէտի (Տիկին) Սթրէնկֆօրտի ի նպաստ Հայաստանի սովելոց ըրած հանգանակութիւնները Կարնոյ և Տիգրանակերտի մէջ կը բաշխուին, Լէվընթ Հէրբրտի մէկ յօդուածէն կը տեսնուի որ Անգղիոյ արդի հանգանակիչ յանձնախումբը կազմել տուողն ալ նոյն իսկ Լէտի Ըսթրէնկֆօրտ էր, անգղեացի հարուստ և մարդասէր տիկին մը, որ Պուլղարիոյ կոտորածէն փնտռտող Պուլղարաց և Իսլամաց և յետոյ Պուլղարիոյ և Արևելեան Ռումելիի գաղթականաց ըրած օգնութեամբք նշանաւոր եղած է: Ուրեմն, տիկին Սթրէնկֆօրտի հանգանակութիւններն և Անգղիական յանձնախմբին հանգանակութիւնները նոյն բանն են, և այս վերջնոյն յայտարարութենէն ալ որ «Քրդաստանի, Հայաստանի և Արևմտեան Պարսկաստանի մէջ սով» տիրողը կը կրէ, կը տեսնուի թէ մինչև ցարդ մի միայն Տիգրանակերտի և Մուսուլի նահանգաց, այսինքն Քրդաստանի թշուառաց օգնութիւն ղրկուած է:

Ուստի կը յորդորեմք մեր ազնուամիտ ազգայիններն, որ ինչպէս ամեն բանի, նոյնպէս և այս կենսական խնդրոյն մէջ՝ օտար օգնութեանց վրա մեծ յոյս չը դնելով, ջանա՛ք ամեն ձիգ 'ի գործ դնել, կարելի եղած զոհողութեանց և ոչ մէկէն չը խորշիլ, որպէս զի յառաջիկայ երկու երեք ամսոց մէջ սովն անդարմանելի վնասներ չը պատճառէ մեր հայաստանցի ազգայնոց, որք արդէն այլ և այլ նկատմամբք թշուառ են:

(Մասիս)

ԱԼԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

«Голосъ» լրագրի մէջ կարդում ենք հետևեալ առաջնորդող յօդուածը:

Վիէննայի մեր թղթակցից հաղորդած լուրերը Ալբանիայի մասին չափազանց նշանաւոր են: Սկուտարիից հաղորդեցին Վիէննա, որ ալբանցիները իրանց անկախ յայտնեցին և դրա մասին մի շրջաբերական հրատարակեցին, որ տպված էր Սկուտարիի մէջ ալբանական լեզուով հրատարակվող լրագրի մէջ: Այդ յեղափոխութիւնը Սկուտարիի մէջ կատարվեցաւ առանց անկարգութիւններ ծագեցնելու: Ապստամբները հրաժարեցրին տեղական ասպահանաւորներին և ալբանական միաբանութիւնը տեղական գանձարանների մէջ պահված գումարները ձեռք բերեց: Օտար հիւպատոսների ապահովութիւնը պահպանելու համար ալբանցիները առանձին պահպան զօրքեր նշանակեցին: Թիւրքայ դրօշակները ամեն տեղ փոխարինված են ալբանական ազգային դրօշակներով. Օսմանեան-փաշայի զրեթէ բոլոր զօրքերը հրաժարվեցին սուլթանի հպատակութենից և անցան ալբանցիների կողմը: Ալբանական իշխանի տիտղոսը միրիդիտների իշխան Պրենկ Բիբ-Դոդին առաջարկվեցաւ, բայց նա հրաժարվեց, յայտնելով, որ դեռ ժամանակ չէ Բ. Դրան հետ «վերջնականապէս» կապերը կտրելու: Այդ յայտնութիւնը չէ արգելում իշխան Պրենկին մասնակցել ալբանցիների շարժմանը, որովհետև նա իր զօրքերով ուղևորվեցաւ Տուզի: Սկուտարի զրաւված է 8000 ալբանցիներով և այնտեղ ասպատմ են, որ շուտով կը հասնեն իտալացի կամաւորներ:

Եթէ այս լուրերը ճիշդ են, Եւրոպան ըստիպված կը լինի կենտրօնացնել իր ուշադրութիւնը Բալկանեան թերակղզու վրա աւելի շուտ, քան թէ նա սպասում էր: Ալբանցիների բաժանվելը Թիւրքայ կայսերութենից չափազանց օտարօրի հանգամանքների ժամանակ է կատարվում: Ի նկատի ունենալով, որ Բ. Դուռը քաջալերում էր ալբանական ապստամբութիւնը և «ալբանական միութիւնը» կարելի է ենթադրել, որ ալբանական այդ վերջին շարժումը Կ. Պոլսի կառավարութեան թուլութեան պատճառով կատարվեցաւ: Միւս կողմից մտածելու առիթ կայ, որ Իտալիան համակրում է ալբանցիների շարժմանը և մինչև անգամ գաղտնի կերպով օգնում է ալբանցիներին: Սկուտարիի մէջ պատահած պատնդքերը կօգնեն իտալական կառավարութեանը այժմեան ընդհանուր ընտրութիւնների ժամանակ ձայների մեծամասնութիւն ստանալ:

Այդպիսով կարելի է ասել, որ ալբանացիները արգելքի չեն հանդիպի նրանց գործով աւելի հետաքրքրված պետութեան կողմից: Թիւրքայ կառավարութիւնը կամ չէ ցանկանում, կամ անկարող է ընդդիմանալ Ալբանիայի քաղաքական վերածնդմանը և բացի այդ Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւններից մէկը, Իտալիան, դիտաւորութիւն չունի բողոքել այդ կատարված փաստի դէմ: Բերլինի դաշնագիրը ստորագրող ուրիշ պետութիւններ էլ կը գտնվեն, որոնք չեն ընդդիմանայ, որ Ալբանիան եթէ բոլորովին անկախ չը լինի, գոնեա Թիւրքիայի հարկատու իշխանութիւն լինի:

Անգլիական կառավարութեանը այդ փաստը առիթ է տալիս իրագործել այն գաղափարը, որին նա ձգտում է: Ռուսաստանի համար Ալբանիայի անկախութիւնը անյարմար չի լինի, եթէ նա կը հասկանայ Ցերնոգորիայի հարցի խաղաղութեամբ վերջացնելու անհրաժեշտութիւնը: Մնում են Ֆրանսիա և Գերմանիա, որոնք շատ քիչ են հետաքրքրված ալբանական գործով և Աւստրիա, որի համար Սկուտարիի մէջ պատահած անցքերը չափազանց անյարմար և վնասակար են, որովհետև խլում են Էդէյեան ծովի մէջ մուտք ունենալու նրա յոյսը:

Ալբանական ապստամբութիւնը աւստրօ-ունգարական կառավարութեան համար ծանր, մինչև անգամ անուղղելի հարուած է: Աւստրիացիների դրութիւնը Բոսնիայում և Հերցեգովինայում շատ վտանգաւոր է, որովհետև նա աւստրիացիներին անդադար յիշեցնում է Գլադստոնի «Ձեռքերը հեռու» խօսքերը, որոնք հռետորական հասարակ բառեր չեն: Անկասկած աւստրօ-ունգարական կառավարութիւնը բոլոր միջոցներ գործ կը դնի, որ ալբանական հարցը միջազգային հարց դարձնի և ամբողջ ամառը դրանով կը զբաղվի:

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՑԻՑ

Բերլին, 1/13 մայիսի

Իմ բոլոր ջանքերը և փորձերը այստեղ մի բան անելու խեղճ հայ սովատանջների համար, դեռ ևս ոչինչ հետևանքի չեն հասցրել: Երբ կարդացի Կամստրականի սրտաշարժ և սարսափ դցող հեռագիրը, իսկոյն թարգմանեցի նրան «Մշակից» և վազեցի «National Zeitg.» խմբագրատանը: Բայց չը նայելով որ ինձ խոստացան իսկոյն այդ տեղեկութիւնը տպելու, ահա մօտ մի շաբաթ է անցել և իմ տուած լուրը չերևեցաւ: Սոփվեցայ դիմել «Vossische Zeitg» լրագրին, որ ընդունեց իմ քաղուածները Հայաստանում տիրող սովի մասին և արդէն տպագրեց այդ քաղուածները:

Ամենքը հեռուից կարծում են թէ ինչ աւելի հեշտ բան կայ, քան մի յօդուած, մանաւանդ մի քանի տող բան մի լրագրի մէջ դեռեղելու.... Այսքան երիտասարդ հայեր նստած են Եւրոպայում, ինչի չեն գրում հայերի մասին, ասում են ամենքը:

Բայց այստեղ լրագրութեան մէջ այնպէս հեշտ չէ ընդունված լինելու: Գերմանական մամուլի մէջ, ինչպէս որ գերմանական ամբողջ կեանքի մէջ մի անթափանցելի Corps-Geist (նեղ, դասակարգային ոգի) է տիրում, և եթէ մէկը երեսելի մի անձ չէ, կամ ներկայացրած չէ եղել խմբագրութեանը մի մօտ կամ ազդեցութիւն ունեցող մարդու կողմից, նա երբէք չէ կարող յոյս ունենալ որ նրա տուած տեղեկութիւնները կը տպվեն: Կը խոստանան, այո՛, ամենահաստատ կերպով,—բայց չեն կատարի:

Մամուլի վրա խօսելով, չեմ կարող չը յիշել այստեղ, որ գերմանական մամուլի մէջ այժմ կըրկին ձգտում է նշմարվում մօտենալ Ռուսաստանին և հայտ ուղղութիւնը ընդհանուր է դառնում, մինչև անգամ առաջադէմ կուսակցութեան օրգանների մէջ, ինչպէս «Volkszeitg» և «Voss. Zeitg» լրագիրներում: Վերջին ժամանակները վրա վրա հրատարակվում են այստեղ գրքեր Ռուսաստանի մասին և չը նայելով որ Գերմանիայի մէջ այնքան գրքեր չեն ծախվում, որքան կարդացվում են ընթերցարանների մէջ, այնու ամենայնիւ այս գրքերը կարճ միջոցում երկրորդ և երրորդ տպագրութեան են հասնում: Մի քանի ամիս է միայն որ հրատարակվել է մի գիրք «Russland vor und nach dem Kriege» և ամենքը դորանով էին զբաղված,—և ահա կրկին լոյս է տեսնում «Berlin und St. Petersburg» մի գիրք, որ ներկայացնում է երկու երկիրների դէպի միմեանց ունեցած քաղաքական յարաբերութիւնները Ալէքսանդր I կայսրի ժամանակից սկսած: Բացի սորանից Ցիւրիխում հրատարակվեցաւ «Russische Literatur und Cultur» վերնագրով մի գիրք: Ամեն լրագիրները լի են քննութիւններով և քաղուածներով այս գրքերից: Հրատարակվում են նմանապէս բազմաթիւ քերականութիւններ, բառգրքեր, մեթոդներ ռուսերէնը սովորելու համար: Մի խօսքով Ռուսաստանը իր կեանքով, լեզուով, քաղաքականութեամբ, ձգտումներով ամենքին հետաքրքրում է, à l'ordre du jour է:

Այստեղի քաղաքականութեան մէջ վերջին ժամանակները ոչինչ նշանաւոր բան չը պատահեց: Իմ կարծիքով միակ նշանաւորն այն է, որ Բայխստագը մերժեց Սամօա կղզիները իբրև գերմանական կոլոնիա ընդունելու և կառավարութիւնը, որ ձգտում ունէր այլ մեծ պետութիւնների պէս մի դեր խաղալու իր սահմաններից դուրս, ստիպված է յետ քաշվիլ, վնասելով իր անուանը, իր յարգանքին, Հանդարտ Ովկիանոսի մէջ իր առևտրական յարաբերութիւններին, իր դրութեանը այլ մեծ պետութիւնների աչքում: Կանցլերի հակառակ կուսակցութիւնները (Fortschritt, կղերական կենտրօնը և առաջադէմ National-liberal'-ները), միացան որ մերժեն կառավարութեան առաջարկութիւնը, չը նկատելով որ իրանց նեղ կուսակցական վարմունքով վնասեցին ոչ միայն կանցլերի քաղաքականութեանը, այլ և Գերմանիայի անուանը և յարգանքին, վնասեցին նրա շահերին....

Պարոնները Grosse Nation լինել ուզելով, իրանց անունը հպարտութեամբ արտասանելով, չեն նկատում որ քաղաքական այն զարմացման չեն հասել մինչև այժմ, որ ընդհանուր օգուտները հասկանան, որ նրանց աւելի բարձր դասեն, քան իրանց սեփական, նեղ, կուսակցական ձգտումները: Նրանք պատրաստ են իրանց համոզմունքի դէմ վարվել (եթէ ունեն համոզմունք), միայն որ հասնեն իրանց նպատակին՝ վնասել կանցլերի քաղաքականութեանը, պատրաստ են զոհել ընդհանրութեան շահերը այն ազգի, որի ներկայացուցիչներն են իրանք, որի օգտի համար իբր թէ ուզում են նրան աղատել Բիսմարկի ազդեցութենից: Եթէ այդ մանր և եսական կուսակցութիւնները իրանց նպատակի կը հասնեն, նրանք կը գլորեցնեն և ամբողջ երկիրը մի անդունդի մէջ և Գերմանիայի ամբողջութիւնը դարձեալ կտոր կտոր կը լինի: Ընդդիմադրութիւնը (opposition) որ կայ այժմ երկրի մէջ, բոլորովին երեխայական, խակ դրութեան մէջ է և ոչ թէ կանոնաւորված և խելացի, այլ opposition à tout prix.

Այս քաղաքական անդարդացումն ամեն տեղ, ամեն շրջաններում նշմարվում է նեղ դատողութեան, նեղ և եսական ձգտումների մէջ: Ընդհանրութիւն, ընդհանուր դաղափար լոկ խօսքեր են և միայն այն ժամանակ իրականութիւն է դառնում, երբ երկիրը վտանգի մէջն է:

Վերջացնում եմ նամակս կրկին դառնալով հայոց սովի խնդրին: Ցաւալի է որ փարիզում հիմնված է Հայաստանի սովատանջներին օգնող մի հայոց մանաժողով: Այժմ Արասխանեանց գրում է ինձ Սարասբուրգից որ հանգանակութիւնը Ֆրանսիայում աջող կերպով առաջ է գնում: Բայց դորա մասին, ինչպէս նա ասում է, դիտաւորութիւն ունի ինքն էլ գրել «Մշակին»:

Դժբախտաբար այստեղ հանգանակութիւնը չաջողվեցաւ:

Անդրէաս Արծրունի

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԼՈՆԴՈՆ, 8/20 մայիսի: «Daily-News» լրագիրը տեղեկացել է, որ թագուհին անձամբ չի բաց անի պարլամենտը: Գահական ճառի մէջ ասված կը լինի, որ Անգլիան բարեկամական յարաբերութիւններ ունի բոլոր պետութիւնների հետ: Մի և նոյն ժամանակ ճառի մէջ ասված է, որ պետութիւնները միաբան պէտք է աշխատեն իրագործել Բերլինի դաշնագրի երեք կէտերը, որոնք մինչև այժմ անկատար են մնացել: Նոր կառավարութեան գլխաւոր նպատակն է օգնել պետութիւնների համաձայնութեանը: Այժմ անգլիական քաղաքականութեան առաջին նպատակն է յունական խնդրի լուծելը: Աֆգանիստանի մէջ կառավարութիւնը մտադիր է խաղաղութիւն և հանգստութիւն վերականգնել, թողնելով Աֆգանիստանը անկախ և Հնդկաստանին բարեկամ դրացի:

ԿԱԲՈՒԼ, 8/20 մայիսի: Աբդուրահման արձակեց իր զօրքերը, յայտնելով, որ այլ ևս զօրքերի հարկաւորութիւն չունի, որովհետև անգլիացիների հետ թշնամի չէ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 մայիսի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ր., երկրորդ 92 ր. 37½ կ., երրորդ 93 ր. 87½ կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 227 ր. 50 կ., երկրորդ 221 ր. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 87½ կ., երկրորդ 90 ր. 87½ կ., երրորդ 90 ր. 75 կ., ոսկի 7 ր. 78 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 25 5/16 պէնս, ռուսաց 100 ր. Բերլինի վրա արժէ 127⅝ մարկ, Համբուրգի վրա 215 մարկ 75 պֆ., Փարիզի վրա 266 ֆր.: Բօրսայի տրամադրութիւնը հանգիստ է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 մայիսի: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչ Նիկոլայեվսկայա երկաթուղու առանձին գնացքով մայիսի 9-ին երեկոյեան 11 ժամին ուղևորվեցաւ Կովկաս: Ենթադրում են, որ Վէյմար, Միխայլով և միւս պետական յանցաւորների գործը կը վերջանայ մայիսի 9-ին:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻ ՀԱՒՆ սէտերի տեսակից, սև գոյնի, սպիտակ բիծով կուրծքի վրա, որձ, «Տիւդօր» անունով, կորաւ Ալէքսանդրեան այգուց, ապրիլի 28-ի գիշերը: Գտնողին խնդրում են հասցնել Օուբալովի տան, կօնդիտէր Կելբէրի մագազինից վերև գտնված Պօլտարացկու ընակարանը, Ստեփան Ծորետելին օրինաւոր վարձատրութեամբ:

3—3

ԵԳՈՐ ԿԱՍՈՒՄՕՎԻ ԵՒ ԸՆԿ.
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ

ԳԼԽԱՒՈՐ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

Յայտնում է հասարակութեանը, որ ցանկացողները կարող են առնել 1 և 2 ներքին 5% փոխառութեան տոմսակները յետաձգութեամբ վճարելով մի տարվայ ընթացքում և աւելի երկար ժամանակամիջոցում, նոր և շատ շահաւէտ պայմաններով, որոնց մասին տեղեկանալ կարելի է նոյն իսկ կանտորայի մէջ, որ նոյնպէս առնում է այդ տեսակ տոմսակներ: Գրասենեակը գտնվում է Ալէքսանդրեան այգու հանդէպ, Թումանովի տանը:

8—10

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄՈՎՍԷՍԵԱՆ
ԲԷՀԲՈՒԹԵԱՆՑ

Որ հայոց փողոցում ամէնքներ է ծախում, խնդրում է այն անձը, որ նրան երեք նամակ է ուղարկել քաքաքային փոստայով, յայտնել իրան թէ ի՞նչ հասցէով պէտք է ուղարկել պատասխանը, որովհետև նամակները սորագրված չեն և նրանց վրա նշանակված չէ հասցէն:

ՅՈՎՀԱՆՆԷՍ Մ. ԲԷՀԲՈՒԹԵԱՆ

Մինկեվեչ խիրուրգիական հ., Կրասնօգլեազով և Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շահէմբօրսկի և Աստաֆանուրով վիներական և կաշու հ., Բաբայեվ ջղային և ներքին հ.:

Շաբաթ Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Բաբով կուրծքի հ., Եանկովսկի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վ. Զօրօվ բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլէկտրական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիեվսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Առաջնաբոյժ Օբրեխտ աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

Թիֆլիսի հայոց ծխական ուսումնարանների տարեկան հարցաքննութիւնները կըսկսուին մայիսի 15-ին և կը շարունակուին մինչև ամսի վերջը, հետևեալ կարգով:

Մայիսի 15 և 16-ին Կուկիու Թանդոյեան օրիորդական ուսումնարանում.
« 17 — Կուկիու Ս. Աստուածածին եկեղեցու ուսումն.
« 19 և 20 Կաթողիկէ Ս. Գէորգ եկեղ. ուսումն.
« 22 — Հալաբարի Ս. Մինաս եկեղ. Եղմիրեան ուսումն.
« 23 — Զուղուրէթի և Ս. Կարապետ եկեղ. ուսումն.
« 24 — Զորաբաշի և Շամքուռեցոց եկեղ. ուսումն.
« 27 և 28 Հալաբարի Մարիամեան օրիորդ. ուսումն.
« 30 և 31 Զգրաշէնի ուսումնարաններում:

Թեմ. վեր. Դ. Բարխուդարեանց

1880

ԹԻՖԼԻՍ

ԿԻՐԱԿԻ, ՄԱՅԻՍԻ 18-ԻՆ ՀԱՅ ԹԱՏՐՕՆԱՍԷՐՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՕՆՈՒՄ

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ

I

ԽԵԼԱԳԱՐԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Հեղ. Գօգոլի, Թարգ. Ց. Տէր-Գրիգորեանի

II

ՀԱՄԲՐԱԿՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՔՈՎ

ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ

ՀԱՅՏԱՐԱՐ ԴԱՏԱՒՈՐԻ ՄՕՏ

Կոմեդիա 3 արար., ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ Ց. Տէր-Գրիգորեանի

Անցքը պատահում է ԹԻՖԼԻՍՈՒՄ

III

ՁԱՒԵՇՏ

1) Պատկերներ ժողովրդական կեանքից, ԲԺԻՇԿ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ կը պատմէ պ. Ց. Տէր-Գրիգորեան

2) Տ. Փաշայեան-Տէր-Գրիգորեան կերդէ բօմանսներ, ի միջի այլոց «ԴԻՇԵՐԸ ԳՐԵՆԱԴԱՑՈՒՄ» երաժշտութիւն Շիֆֆի:

Տեղերի գինը ՍՈՎՈՐԱԿԱՆ է:

Տոմսակները թէ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ օրը և թէ ՎԱՂՕՐՕՔ կարելի է ստանալ ԱՐԾՐՈՒՆՈՒ թատրոնի կասսայում, ԱՄԵՆԱՅՆ օր առաւօտեան 10—2 և երեկոյեան 6—8 ժամը:

1—5

ՆԻՈՒ-ԷՕՐՔԻ ԶԻՆԳԵՐ

Ամենամեծ կարելու մեքենայի ընկերութեան աշխարհային համբաւն բաւական ըլլալով յանձնել իրեն ձեռագործութիւններն կազմուածքին պարզութեամբը, հաստատութեամբը և այլա՛ներպ աշխատութիւններն կատարելով, տնական և արուեստաւորներու պիտոյից համար, կը համառօտէ զմեզ համրելու մէկիկ մէկիկ իրենց գերազանցութիւնն ուրիշ հնարուած նման առարկայից վրա:

Վերոյիշեալ Նիու Յօռքի Զինկեր ընկերութիւնը այս ապրիլի սկզբներն բացաւ ուրիշ գլխաւոր քաղաքներու պէս, հոս ևս՝ Թիֆլիս շտեմարան մը այլ և այլ կարելու մեքենաներով, Ատամանակի փողոցն, Զուպալովին տունն, Երևանի հրապարակի մօտ անմիջապէս և կը խնդրուի խաթունայց և պարոնայց ուզող ստանալ այսպիսի մեքենայ դիմել հոն միայն և կը խնդրուի միանգամայն չը խառնակել այս բնիկ նորքաց շտեմարանն ուրիշ վաճառականներու հետ, որոնք միայն Զինգերի սուտ անուամբ նշանակներով և պատկերներով կը խաբեն մեր պաշտպանաւորներն և դժբաղդաբար իրենց մեքենաներով կը տարակուսացունեն սեպհական մերոնց լաւութեան անունն:

Ուրիշ քաղաքներու բնակիչք ալ կրնան դիմել մեզ նամակով թէ մեր ընթացիկ գիներուն ցուցակն ուղելու համար, որ կը խրկեմք ձրի և թէ որ և է տեղեկութիւն հարցունելու համար, որոնց կը պատասխանեմք նմանապէս մի և նոյն լեզուով և կարելի արագութեամբ, մեր երեսագիրն է:

Г. Нейдлингеръ. Тифлисъ.
Գ. Նայդլինկեր

Գլխաւոր հոգաբարձու ամբողջ Ռուսաստանի և միջին Եւրոպայի:

Խանութի մէջ կարելի է ուղղել խանգարված մեքենաները:

3—3 (2)

ՍՈՒՐԱՎԼԵՆԻԵ

Поти Тифлисскаго участка Закавказской желѣзной дороги доводитъ до всеобщаго свѣдѣнія, что съ 10-го сего мая возстановляется движеніе пассажирскихъ поѣздовъ между станціями Тифлисъ и Мцхетъ, но съ пересадкою у станціи Авчалы. Росписаніе отхода поѣздовъ изъ Тифлиса—прежнее, за исключеніемъ поѣзда № 8, (пятичасоваго) который до увѣдомленія отправляемъ не будетъ.

1—1

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գավրօնսկի կանանց հիւանդ. Գօրալեվիչ ներքին հ., Բօտինեանց կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շահէմբօրսկի վիներական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ խիրուրգիական հ., Վզօրօվ վիներական և բողազի հ., Բէյլս աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլեազով, Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ և Ռուդկովսկի ներքին հ., Շահէմբօրսկի վիներական և կաշու հ., Աստուածատուրով կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վզօրօվ վիներական և բողազի հ., Բօտինեանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրօնսկի կանանց հ.,

Дозволено Цензурою 12 Мая 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսօնի Типографія А. А. Михельсона